Արշիլ Կորեի՝ ամերիկեան արդի գեղանկարչութեան վերացապաշտարարայայտնաբերող շարժումին ռահիվիրան, յառաջիկայ Նոյեմբերին ուշադրութեան կեդրոն պիտի դառնայ Ամերիկեան Արուեստի Ուիթնի թանգարանին մէջ, որ կ'ազմակերպած է Արշիլ Կորեիի գծանկարներուն նուիրուած յետահայեաց ցուցահանդէս մը: Աճշուշտ ուրախութիւն կը պատճառէ ամերիկահայ գեղանկարիչին արուեստը հանրութեան ներկայացնող որեւէ նախաձեռնութիւն, սակայն այս ցուցահանդէսը կ'անտեսէ «Արարատ» ժապաւեճին մէջ եւ անկէ առաջ՝ Նուրիաճ Մաթոսեանի «Պէր Էյնճըլ» կենսագրութեան ձածրով վերահաստատուած Կորեիի տիպարը՝ իբրեւ Բայկական Ցեղասպանութեան հոգեբանական ազդեցութիւններով ստեղծագործած գեղանկարիչ: Աճիկա մոյնսակ կը վերածուի Բայկական Ցեղասպանութեան լռելեայն ժխտումի, երբ հակամտ է քողարկելու այս գործօնը:

Ամերիկայի թանգարաններուն գործունէութեան մասին տեղեկութիւններ հրապարակող «Արթ Միուզիըն Նեթուրը Նիուզ» կայքին մէջ լոյս տեսած յօդուածէ մը (տեսնել քովի սիւնակները) ի յայտ կու գայ, թէ ցուցահանդէսին պատասխանատուները Վերադիմայի մէջ Կորեիի իրագործած գծանկարները կը տեղադրեն զուտ ամերիկեան շրջագծի մը մէջ եւ որեւէ ակնարկութիւն չեն կատարեր հայկական անցեալէն գաղտնիութիւններու: Ընդհակառակը, անոնք կ'ըսեն, թէ՛ «մինչ Կորեիի վերաբերող մասնագիտական հրատարակութիւնները ընդհանրապէս հակամտ են անոր ասպարէզը մերկայացնելու անոր կենսագրութեան ընդմէջէն», ցուցահանդէսին առիթով լոյս պիտի տեսնէ պատկերագիրը մը, որ՝ «պիտի կեդրոնանայ ուղղակի անոր գծանկարներուն վրայ, անոր արուեստն անբաժան այս գործերը նոր դիտակցութեան վերլուծելու համար»: Նուրիաճ Մաթոսեան հետեւեալ ձեւով կը նկարագրէ խնդրոյ առարկայ գծանկարներուն ներշնչման աղբիւրն ու մղիչ ուժը.

«Մինչ ամառը իր լրումին կը հասնէր,

Կորեի իր մանկութենէն ի վեր նոյնքան ուժեղ էր առողջ չէր զգացած: Այդ զգացումները արտայայտուած են Վանի բնաշխարհին վառ գոյներով, Վանայ լիճին եւ լեռներուն կապոյտի, ծիրանի եւ արեւաշող մարմնագոյնի երանգներով, տունները զարդարող հիւսուածքներու ու գորգերու բնորոշ մուր կարմիրով, դեղինով ու կանաչով: Ասեղմագործուած կաշակներով եւ զօգնողներով հայ կիներու, գոյնզգոյն հագուստներով ջիւրու կիներու պատկերները կը փայլատակեն անոր Վերադիմայի գծանկարներուն մէջ, որոնք երբեմն սխալ կերպով կը կոչուին բնանկարներ կամ հովուերգութիւններ: Անոնք գոյները կու գային տարբեր ժամանակէ ու տեղէ»: «Կորեիի մանկութեան պատմութիւններն ու առակները բոլորն ալ կը կեդրոնանային ծառերու եւ ժայռերու, անասուններու եւ թռչուններու վրայ: Բնութիւնը միշտ ալ անոր երեւակայական աշխարհին ամենէն հարուստ աղբիւրը եղած է: Խորագրի (Կորեիի ծննդավայր գիւղը,- «Ա.») բնութեան պատկերները Կորեիի գեղանկարչական բառապաշարին առաջին տարրերը եղած էին: Վերադիմայի մէջ իրագործած անոր առաջին բնանկարներուն բնորոշ խնդրակառուցութիւնը կը նմանոր մանուկի մը առաջին յայտնաբերումներուն, նախքան գաղափարի եւ լեզուի միջամտութիւնը: Կորեի կը գտնուէր այն վիճակին մէջ, զոր գործարարները ու Պրեթոն բնորոշած են իբրեւ հայրենիքէն տեղահան ըլլալու վիճակ: Դայնքիցէն վերջնականապէս դուրս դրուած ըլլալու վիճակը հոգեբանական խզում մը կամ ստարուս մը յառաջացուցած էր: Պրեթոն գիտակցաբար գայն կը մշակէր իբրեւ զգացողութիւններու նոր եւ տարօրինակ փորձառութիւնը ապրելու, «հրաշալիին համընդհանրութիւն» թեքմիք մը»:

«Կորեի Վերադիմայի իր գծանկարներով իր առաջին քայլերը կ'առնէր՝ ընդոծին մղումով գծուած պատկեր մը շարահիւսութեան վերածելու. ան դասական խտտապահանջութիւնն ու կարգապահութիւնը կը միաձուլէր հոգեբանական անկաշկանդ բովանդակութեան»:

«Կորեի կը գծէր իր ներքին Բայաստանը, անկայն ատիկա գողտից էր: Իր նոր ընտանիքին հետ հողին վրայ ապրելով՝ ան վերահաստատած էր իր արմատները եւ վերստին մուտք գործած էր իր հոգեբանական աշխարհը»:

Ռահվիրայ մը վերացապաշտ շարժումին մէջ, որ ի վերջոյ կերպարանափոխեց ամերիկեան արուեստը, Արշիլ Կորեի (ապրած է 1905էն 1948) պիտի ոգեկոչուէ իբրեւ 20րդ դարու եզակի վարպետներէն մէկը: Անոր նուիրուած ցուցահանդէսի մը բացումը պիտի կատարուի Նոյեմբեր 20ին, Ամերիկեան Արուեստի Ուիթնի թանգարանին մէջ: Արշիլ Կորեիի գծանկարներու յետահայեաց ցուցահանդէսը պիտի շարունակուի մինչեւ 14 Փետրուար 2004: Անիկա պիտի արժեւորէ Կորեիի գծանկարներուն ղերբ՝ անոր արուեստին կազմաւորման եւ տեսողական արտայայտչաձեւին մաս կազմող տարրերուն ու ոճին եղափոխութեան մէջ: Ցուցահանդէսը պիտի ընդգրկէ 140 գծանկարներ, որոնցմէ ոմանք ցարդ չեն ցուցադրուած հրապարակաւ: Ցուցահանդէսը Ուիթնիին պիտի ճամբորդէ Հիւսիսը, ուր գայն պիտի հիւրընկալէ «Տը Մենիլ Բըլլեքըն»ի պատկերասրահը:

«Կորեիի խորապէս հզօր գծանկարները հիմնական տեղ ունին անոր արուեստը հասկնալու մէջ, - կ'ըսէ Ուիթնի թանգարանին պատասխանատուներէն Մաթոսեան Լ. Էնտըրընը,- Կորեիի հետ մեր կապը կու գայ շատ հինէն եւ սկիզբ առած է 1937ին, երբ գնած ենք անոր մէկ գեղանկարը, որ թանգարանին կողմէ գնուած անոր առաջին գործն է: Ուիթնի յիշատակի ցուցահանդէս մը կազմակերպեց 1951ին, Կորեիի ողբերգական կանուխ մահէն քանի մը տարի ետք: Կորեիի նուիրուած այլ ցուցահանդէսներ եւս կազմակերպած ենք եւ շատ ուրախ ենք, որ արուեստագէտին գծանկարներուն նուիրուած այս առաջին գլխաւոր ցուցահանդէսը կը կազմակերպենք: Կորեիի գործերը յեղաշրջեցին ամերիկեան արուեստը եւ կը շարունակեն հիացում պատճառել»:

Ցուցահանդէսին պատասխանատուներէն է Ճեյն Մ. Լի, որ կը գլխաւորէ Ուիթնիի գծանկարներու բաժինը, նաեւ՝ Արշիլ Կորեիի մասնագէտ Մելվին Փ. Լետըր, որ Ուաշինկթոնի համալսարանին մէջ արուեստի պատմութեան դասախօս է:

«Կորեիի գծանկարները կը գտնորոշուին արուեստագէտին բնորոշ վայելչագեղ գիծերով եւ ուժգնութեամբ,- կ'ըսէ Ճեյն Լի,- Արուեստագիտական հմտութիւն պահանջող գեղանկարչութեան այս ձեւը Կորեիի սորվեցուցած է կարգապահութիւն եւ հակաշփոխ բանեցում, անոր տեսողական նորարարութիւնը առաջնորդելով դէպի նոր բարձրութիւններ»:

ԱՐՈՒԵՍԱԳԵՏԻՆ ՄԱՍԻՆ

Արշիլ Կորեի (Ոստանիկ Ատոյեան) ծնած է 1904ին կամ 1905ին (տարբեր թուականներ կը յիշուին), Հայաստանի Վան գաւառին մէջ: 1915ին թուրքերու կողմէ հայերուն վարդին պատճառով իր ընտանիքին տարադնումէն եւ երիտարար Բորտովաճար լրջալէն ետք, Կորեի

Միացեալ Նահանգներ գաղթած է 1920ին: Հոս է, որ ան որդեգրած է Արշիլ Կորեի անունը եւ ստեղծած է նոր կեանք մը իրեն համար:

Էլիզ Ալլընը հասնելէ ետք ան որոշ ժամանակ մը ապրած է Նիւ Ինկլընտի մէջ, իր ազգականներուն հետ: 1924ին եկած է Նիւ Եորք եւ սկսած է արուեստ ուսանիլ: Եռտող դարձած է արուեստի ուսուցիչ եւ տարիներ շարունակ ուսուցչութիւն ըրած է, իր ապրուստը ապահովելու համար իբրեւ արուեստագէտ: 1920ական տարիներուն եւ անկէ ետք Կորեի ծանօթացած է բարեկամացած է բազմաթիւ մեծ արուեստագէտներու հետ, որոնց շարքին՝ Սթիւարթ Տէյլիս, Ճոն Կրահամ, Ուիլիքմ Տը Բուենիկ, Տէյլիտ Սմիթ եւ Իսամու Նոկուչի:

Նիւ Եորքի արուեստի շրջանակներուն մէջ 1930ական եւ 1940ական տարիներուն Կորեիի դիրքը առիթ տուած է, որ ան կապեր հաստատէ կարգ մը գերիտապաշտ արուեստագէտներու հետ, որոնք Բ. Աշխարհամարտին պարտադրաբար խոյս տուած էին Եւրոպայէն: Անոր բարեկամութիւնը գերիտապաշտ բանաստեղծ Անտրէ Պրեթոնի հետ, որ մեծ հաւատք ունէր Կորեիի արուեստին նկատմամբ, մեծ ազդեցութիւն գործած է: Կորեիի բարեկամութիւնը չի լքի արուեստագէտ Մաթթայի հետ՝ իր ներգրուած ունեցած է անոր հատուկ ոճին զարգացումին մէջ: Մաթթայ քաջալուծած է Կորեիին, որ անպատաստից բաներ գծէ եւ յաւելեալ փորձարկութիւններ կատարէ թուղթի վրայ: Մաթթայ անոր ծանօթացուցած է գերիտապաշտ ոճին յատուկ ինքնագործ գեղանկարչութեան թեքմիքին:

Բնադրուած Հարոլտ Ռոսենպերկ նշած է, թէ Կորեի՝ «ամբողջ կենսաբան ընթացքին ուսանող մը, մինչեւ արմատները մտաւորակալ էր, կ'ապրէր բառերու եւ գաղափարներու եթերային աշխարհի մը մէջ եւ նոյնքան հանդիստ կը զգար գրադարանի մը մէջ, որքան՝ թանգարանի եւ պատկերասրահի»: Նիւ Եորք քաղաքը Կորեիի կ'ընձեռէր այն մշակոյթը, զոր ան կը ցանկար, իսկ գերիտապաշտները անոր կ'ընձեռէին իրենց քաջալերանքն ու գծային սահունութիւնը, ինչ որ գայն պիտի առաջնորդէր իրագործելու իր սեփական վերացապաշտութիւնը:

Կորեիի գեղարուեստական զարգացումը կարելի է մասամբ բնորոշել զիւրակալ եւ քաղաքային միջավայրերու միջեւ անոր անցումներով, որոնք նշած են անոր կեանքի անխնայ արձագանքային պահերը: Կորեիի փորձառութիւնը մեծ փոփոխութիւններ պիտի կրէր եւ պիտի ընդարձակէր 1940ական տարիներու սկիզբը, երբ ան պիտի ապրէր ամերիկեան գիւղական շրջաններու մէջ: Ասիակ սկիզբ առաւ 1941ին Ակնիւ Մակուստիէի հետ անոր ամուսնութեամբ: Կորեի իր կիներ կը կոչէր «Մակուս», ինչ որ հայկական փաղաքական ձեւ մըն էր, եւ հետագային ուրիշ



Արշիլ Կորեիի անվերնագիր մէկ գծանկարը՝ ածխամատիտով եւ մատիտով

ներ եւս այդպէս պիտի կոչէին գայն: Անոր կնոջ ծնողները ազարակ մը ունէին վերջինիայի մէջ: Յաջորդ 7 տարիներուն Կորեի պարբերաբար ապրած է գիւղական այս շրջանին մէջ եւ հետագային նաեւ՝ Քրենսթիթըթի մէջ: Ընտանիքին ապրուստը ապահովելու պարտաւորութիւնը (առջինեկ աղջիկը՝ Մարոն ծնած էր 1943ին, իսկ երկրորդը՝ Նաթանը՝ 1945ին) պատճառ դարձած էր, որ ան մեծ թափով արտադրէր իբրեւ արուեստագէտ:

Վերջինիայի մէջ 1940ական տարիներուն Կորեիի գծած բնանկարներուն վերացապաշտ արտայայտչաձեւը կ'ընդգրկէր բնութեան եւ օրկանական մարմիններու պատկերներ: Ան տուն կը տանէր դաշտերուն մէջ իր գծած գեղանկարները, ապա վերստին կը գծէր գանոնք՝ որոնելով իւրաքանչիւր գեղանկարի բազմաթիւ տարբերակները: Այս կրկնութիւնները առիթ կու տային, որ ան բացօթեայ վայրերու մէջ յղացած իր նոր գաղափարները ստուցէր այնպէս, մինչեւ որ անոնք դառնային իր արտայայտչամիջոցներուն անբաժանելի մէկ մասը:

Մէյքը Եափիրօ գրած է ներածականը էթնիկ Եւրոպայի Կորեիի նուիրուած մենագրութեան: Ան կը գրէ, թէ Կորեի «ցերեկը երազող իր միտքին մէջ կ'ազմուած պատկերներու անկայուն եւ աղօտ տարածութիւնները իրարմէ անջատելէ ետք գոյնը կը գատնէր գիծէն՝ գեղանկարի մը մէջ գոյնն ու զիծը վերածելով երկու տարբեր բաղկացուցիչ տարրերու»: Կորեիի այս ժամանակներու գծանկարները արուեստագէտին նաեւ տուած են առիթը նոր թեքմիքներ փորձարկելու եւ զարգացնելու: Ան իր գեղանկարները կը լուար լոգարանին մէջ, կը փոխէր գանոնք, որպէսզի չորնան, ապա գանոնք կը թերթէր եւ աւագաթուղթով հարթ մակերես մը կը պատրաստէր:

ԿՈՐԵԻԻ ՄԵԿ ԳԵՂԱՆԿԱՐԸ ՕԳԱԿԱՅԱՆԻ ՄԸ ՄԷՉ

«ՆՈՒՐԱՐԸ ՍԹԱՐ ԼԵՏԿԸՐ»Ի ԹՂԹԱԿԻՑ ՏԱՆ ՊԻՇՈՖ ԿԸ ԳՐԷ ՕՂԱՆԱԿՅԻՆ ԹԹԻՈՅԷ 100ԱՄԵԱԿԸ ՆՅՈՂ ՑՈՒՑԱՆԱՆԴԷՍԻ ՄԸ ՄԱՍԻՆ ԵՒ ԿԸ ԿԵՐՈՒՆԱԿՆ ԿՈՐԵԻԻ ԵՐԿՐԱԿ ԺԱՄԱՆԱԿ ԿՈՐՍՈՒԿԸ ՄԵԿ ՈՐԱՆԱԿԱՐԻՆ ԿՐԱՅ

Ռայթ եղբայրները հարիւր տարի առաջ օդը բարձրացուցին առաջին ճամբորդատար օդանավը Բիթի Նոքսի մէջ: Նիուարքի թանգարանը այս իրադարձութիւնը կը յիշատակէ փոքր ցուցահանդէսով մը, որ կեդրոնացած է վերացապաշտ գեղանկարչութեան կանոնի ժամանակներուն եւ տեղւոյն օդային թռիչքի պատմութեան միջեւ գրեթէ անծանօթ կապին վրայ:

«Թռիչք» Նիւ Ճըրզիի մէջ՝ վերնագիրով ցուցահանդէսը կը մէկտեղէ 1930ական տարիներուն ստեղծագործած 3 արուեստագէտներու գործերը: Անոնցմէ երկուքին՝ Արշիլ Կորեիի եւ Ժոզէ Թուրի Գը Ռիվերայի գործերը ապսպրուած են Նիուարքի առաջին օդակայանին համար, 1935ին:

Կորեի հայ գաղթական մըն էր եւ Ամերիկայի առաջին վերացապաշտ գեղանկարիչներէն մէկը: Մարք մը, որուն արուեստի գործերը կը ցուցադրուին այս երկրին ամէնէն անուանի թանգարաններուն մէջ, սակայն գրեթէ անծանօթ կը մնան աշխարհին: Մինչեւ իր անձնապահուցիչութիւնը 1948ին, Կորեի առաջնորդող լոյս էր Նիւ Եորքի արուեստի աշխարհին մէջ, Ժոզէ Ռիվերայի անկախութեան վայելչող ուսուցիչը մը՝ Արթ Սթիւարթը լիկի մէջ, նաեւ՝ որոշ չափով պճնասէր մը: Կորեիի ստորաբնութեամբ որեւէ գործ թանկարժէք է, իսկ անոր կորուստն գործերուն յայտնաբերումը մեծ վերնագիրներու արժանի իրադարձութիւն է:

Նիուարքի թանգարանին մէջ ցուցադրուող Կորեիի գործն նման վերնագիրներ իւրեք 1972ին, երբ յայտնաբերուեցաւ պատի ներկի 14 խաւերու տակէն: Որմանակարները ապսպրուած էին «Ռուրք» Փրոկրէս Էտմիլիանի մէջ կողմէ: Անոնք պիտի իրագործուած էին պատարի վրայ, ապա՝ պատերուն վրայ փակցուած: Անոնք Տը Ռիվերայի ալիւմինիումէ «Թռիչք» քանդակին հետ 1935ին կը զարդարէին օդակայանին վարչական շէնքը: Այս երկու գործերուն գետնուումէն ետք կատարուած է օդակայանին բացումը: Վեց տարի ետք սկսեալ Բ. Աշխարհամարտը եւ ամերիկեան բանակին ճարտարագէտները ստանձնեցին օդակայանը: Անոնք ներկեցին որմնանկարներուն վրայ: Տը Ռիվերայի քանդակը բնութարար ակելի գիւրդին փոխադրելի ըլլա-

լով՝ թանգարանին փոխանցուած է 1942ին, երբ բանակը հաստատուած է օդակայանին մէջ:

«Որմանակարներուն յայտնաբերումը կը պարտինք Ռուրք Պաուսմէնի, - կ'ըսէ Նիուարքի թանգարանին փոխ տնօրէնը՝ Ուարտ Մինց:- 1970ական տարիներու սկիզբը Ռուրք տնօրէնն էր Նիւ Եորքի «Կրէյ Արթ» պատկերասրահին, որ ունէր Կորեիի մէկ որմնանկարին ուսումնասիրական գծագրութիւնները, սակայն ոչ ոք գիտէր, թէ ինքնին որմնանկարը ո՞ր կը գտնուէր: Ռուրք կը հաւատար, թէ «Կրէյ Արթ» պատկերասրահին մէջ պահպանուած գծագրութիւնը որմնանկարին մէկ մասն էր, սակայն վստահ չէր:

«Պաուսմէն 1972ին այցելած է Նիուարքի օդակայանին վարչական շէնքը՝ տեսնելու համար, թէ արդեօք կարելի՞ էր գտնել որմնանկարներուն հետքը,- կ'ըսէ Մինց:- Չեմ մոռնար, թէ ինչպէս ինծի պատմեց պատէ մը դուրս ցցուած պատարի մը թիւին մասին. միայն մէկ թիւի, եւ ըսաւ. «Թռիչք» ի վերջոյ հոս են որմնանկարները»:

Որմանակարները պատէն հանուեցան եւ պատին մէկ մասը անոնց հետ փոխադրուեցաւ Նիւ Եորքի համալսարանին Գեղեցիկ Արուեստներու պահպանութեան կեդրոնը, ուր մասնագէտ Ալյան Ֆրանց սկսեալ համբերութեամբ հանել ամերիկացի զինուորներուն աւելցուցած ներկի խաւերը: Նիւ Եորքի եւ Նիւ Ճըրզիի օդանավային իշխանութիւնը, որ սեփականատէն է որմնանկարին, գայն երկար ժամանակի վրայ փոխ տուած է Նիուարքի թանգարանին, Տը Ռիվերայի թուղթ-օդանաւ մը պատկերող մետաղէ վերացապաշտ քանդակին հետ:

Նիուարքի թանգարանին մէջ ցուցադրուած միւս գործը թէ՛ ստոր Ռոսաբի «Օդակայանի քանդակ»ն է. անագէ, պողպատէ, պղինձէ եւ ալիւմինիումէ գործ մը, որ ակելի պլենետրի կը նմանի: Անիկա իրագործուած է 1932ին եւ գնուած է թանգարանին կողմէ, թէ՛ եւ կը պատկանի «Թռիչք» քանդակին եւ Կորեիի որմնանկարին ժամանակներուն:

Տպագորիչ է, երբ կանգ կ'առնենք Կորեիի որմնանկարներուն դիմաց եւ կ'անդրադառնանք, թէ անոնք իրագործուած են Ռայթ եղբայրներուն կողմէ օդանաւային թռիչքի յայտ-



Արշիլ Կորեիի «Էյրլ Դեյթ» (օդային քարտէս) իւղանկարը (իրագործուած՝ 1936էն 1937ի միջեւ) սուս կը կարծուի «Թռիչք» Նիւ Ճըրզիի մէջ» ցուցահանդէսին, որ այս օրերուն տեղի կ'ունենայ Նիւարքի թանգարանին մէջ: Ցուցահանդէսը կը շարունակուի մինչեւ Սեպտեմբեր 7:



Նագործումէն հազիւ երեք տասնամեակ ետք՝ Նոյնքան տարւորիչ է, երբ այս արմատական որմնանկարները կ'առնչենք զարդարային արուեստի ոճին ազդեցութիւնները կողոյ այն քանդակներուն հետ, որոնք կը ցուցադրուին անոնց դիմաց: Կորեիի յղացքը 10, նոյնիսկ 20 տարի աւելի կանուխ կը թուի այդ ժամանակներու ամերիկեան արուեստին, մասնաւորաբար գոյնի, տարածութիւններու եւ համեմատաբար փոքր զիծերու եւ նշաններու համարուածով (արուեստագէտը օգտագործած է Նիուարքի օդակայանին մէջ իր տեսած քարիւղի տուփերուն եւ շարժակներու շեղ հատուածներուն ուշադրաւ ու ճշան գոյնները):

Շատ ուշադրաւ է, թէ եւ ոչ զարմանալի՞ նկատուի ունեանալով Նիուարքի թանգարանին պատկարները հաւաքածոն, թէ թանգարանը յարգանքի տուրք կը մատուցէ արհեստագիտութեան պատմութեան՝ վերացապաշտ դասական գեղանկարչութեան ցուցահանդէս մը կալցնելով:

Պատկերասրահ
Լ. ԿԻՒՆՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ


Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



ՔԱՄԵՐՈՒՆ ԵՒ ՖՐԱՆՍԱ ՄԻՐՏԱԿԱՆՆԵՐ

ՄԱՐԶ ՎԻՎԻԵՆ ՖՈՅԻ ՄԱՐԸ ՑՆՑԵՑ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՇԽԱՐՀԸ



Մարք Վիվիե Գ

Ֆուտբոլի աշխարհը երեկ կորսնցուց երիտասարդ մարզիկ 28 տարեկան քամերունցի միջազգային միջնապահ Մարք Վիվիեին, որ Բուլոնյան դեպարտման Միջցամաքային մասային ֆուտբոլի մրցաշարքի կիսաարտականին 72րդ վայրկեանին գետնին ինչպես 45 վայրկեան ետք մահացավ:

Նախքան պատգարակով անոր դաշտին դուրս բերուիլը կարծուեցան, որ ան իր լեզուն կլլած է, սակայն ի յայտ եկավ, որ ունեցած է սրտի կաթուած մը դաշտին վրայ:

Ֆո, որ Բամերունի հետ իր միջազգային 62րդ մրցումը կը կատարեր, մաս կը կապուեր Մանչեսթեր Սիթիի:

Անոր կապուը, թեև 1-0 մրդիւնքով պարտութեան մատնեց Բուլոնյան, շնորհիւ՝ Նտիեֆի նշանակած կոլին (9րդ), սակայն անոր խմբակիցները արդեօք Ֆրանսայի դէմ աւարտականին ինչպիսի մրցում մը պիտի կատարեն, ուր անոնց տրամադրութիւնները վստահաբար, որ խանգարուած պիտի ըլլան:

Աւարտական հանգրուանին իր տունը Ֆրանսա ապահովեց 3-2 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Թուրքիան: Յաղթական կապուին երեք կոլերը նշանակեց Արսենալի եռեակը՝ Թիերի Հանրի (11րդ), Ռոպեր Բիլետ (26րդ) և Միլվին Ուիլթորտ (43րդ):

ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒ ՍԱԿԱՐԱՆԸ ԱՐԴԷՆ ԻՍԿ ԲԱՅՈՒԱԾ

● ՓԱՐԻՉ ՍԷՆ ԺԵՐՄԵՆԻ պատասխանատուները երեկ յայտնեցին, թէ յաջողեցան իրենց կազմին միացնել Պասքիայի ղեկավար միջազգային միջնապահ Միքայել Էսկերը:

20 տարեկան Էսկերի ստորագրութիւնը ձեռք բերելով, աշխարհի Փարիզ ՍԷՆ ԺԵՐՄԵՆԻ յաջողեցան անոր համար միջազգային պայքարը շահիլ, նկատի ունենալով որ այդ մարզիկով հետաքրքրուած էին Գառնի Էվրթընը, Ֆրանսայի ախոյեան Լիոն և Լիվերպոլը:

● ԼԻՈՆԻ պատասխանատուներուն համաձայն, պրագիցի խմբակու Սոնի Անտերոնի փոխարէն անոնք կը մտադրեն իրենց կազմին միացնել Ռէյալ Մատրիտի յառաջապահ Ֆեռնանտո Մորիենթէսը: Հակառակ անոր որ 27 տարեկան Մորիենթէս մինչեւ 2006 թուականը պայմանագրութիւն մը ստորագրած է մայրաքաղաքի կազմին հետ, սակայն 2002-2003 եղանակին հազիւ դաշտ ներկայացաւ, պրագիցի Ռոնալտոյի ժամանումէն ետք (ինքն Միլանէն):

1999ին, Անտերոնի համար շուրջ 18 միլիոն եւրօ վճարած Լիոնի պատասխանատուները յայտնեցին, թէ որոշեցին այս ամբան ընթացքին զատ արձակել իրենց մարզիկը, որ այս եղանակին նշանակեց 12 կոլ:

Նշենք, թէ Լիոն հետաքրքրուած է նաեւ Վալենտինա Նորվիկիայի յառաջապահ Ժոն Բարոլով և Մայորքայի քամերունցի յառաջապահ Սամուէլ Էթուլով:

● ՄԱՐՍԷՅԻ պատասխանատուները երեկ յայտնեցին, թէ շատ հաւանաբար իրենց կազմին միացնեն Սլաւիա Փրակայի միջնապահ Սթեֆան Վաքուսեքը: Վաքուսեք, որ եօթ անգամ կրած է Եվրոյի ֆուտբոլի ազգային խումբին շապիկը, նախապէս Եվրոյի 21 տարեկանէն վար կրտսերներու ֆուտբոլի ազգային խումբին խմբակու էր, որ անցեալ տարի Զուլցե-րիոյ մէջ շահեցաւ Եվրոպայի ախոյեանութեան տիտղոսը:

● ԻՏԱԼԻՈՑ ախոյեան Եռվենթուսի պատասխանատուները երեկ հաստատեցին այն լուրը, թէ Բ. դասակարգին մաս կազմող Վերոնայի վճարեցին հինգ միլիոն եւրօ և իրենց կազմին միացուցին յետապահ Մարո Բամորանէսին:

26 տարեկան Մարո, որ անցեալ Փետրուարին առաջին անգամ ըլլալով կրց Իտալիոյ ֆուտբոլի ազգային խումբին շապիկը, Օգոստոս 2000ին Բրուզ Ազիլէն (Մեքսիքո) միացաւ Վերոնայի:

Երկու եղանակ մաս կազմելէ ետք Վերոնայի, անցեալ ամառ փոխ արուեցաւ Եռվէի: Ան թէև Արմանթինի մէջ ծնած է, սակայն անոր մեծ հայրն ու մեծ մայրը Իտալացի են: Վերոնայի հետ անցեալ եղանակին նշանակեց չորս կոլ:

ԼԻՐԱՆԱԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՑԱՇԱՐՔ

Շ. Ա. Ա. Մ. ՏԻՐԱՊԵՏԵՑ, ԲԱՅՑ՝ ԴՈՒՐՍ ՄԱՑ

Լիբանանի ֆուտբոլի բաժնի մրցաշարքի կիսաարտական հանգրուանի դարձի մրցումին, երեկ երեկոյան Պէյրուսի Քաղաքապետարանի դաշտին վրայ Շ. Ա. Ա. Մ. ֆուտբոլի ներկայացուցչական խումբը թեւ 0-0 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրելէ ետք Նրժմէի հետ դուրս մնաց մրցաշարքէն, սակայն Շ. Ա. Ա. Մ. մարզիկները փաստեցին, որ Լիբանանի դաշտերուն վրայ կը մնան զօրաւոր խումբ մը, հոգ չէ թէ իրենց մրցակիցը Նրժմէն էր:

Երթի իրենց արձանագրած յաղթանակին ապահովելով (2-0), Նրժմէի մարզիկները դիմած էին պաշտպանողականի, որովհետեւ խումբին գրեթէ կէսը ստանձնած էր յետապահի պաշտօն:

Այդ մէկէն օգուտելով Շ. Ա. Ա. Մ. մարզիկները ամբողջութեամբ իրենց տիրապետութեան տակ առին մրցակից կապը, որ կը փորձէր միայն պաշտպանուիլ Շ. Ա. Ա. Մ. մարզիկներուն կողմէ կատարուած յարձակումներէն:

Դժբախտաբար սակայն Շ. Ա. Ա. Մ. ստեղծած շուրջ տասը առիթները չարդիւնաւորուեցան:

Բ. կիսախաղի շուրջ 20րդ վայրկեանէն ետք Նրժմէի մարզիկները աւելիով կորսուեցան երբ անոնց խմբակու Մուսա Հրժէյ կարմիր քարտ մը ստացաւ օրուան իրաւարար Ահմէտ Մանսուրէն: Իրաւարար տուաւ ճիշդ որոշում մը, որովհետեւ մինչ Վարդան Ղապարեան գնդակով առանձին կ'ուղղուէր դէպի Ռահիմ Ֆաթթալի բերդը, Մուսա այլընտրանք չունեցաւ բացի ֆաուլով մը կատարելու վարդանի յառաջիակացը, Նրժմէի մեծ քառակուսիին մօտէրը:

Մրցումին սկիզբը (13րդ վայրկեանին) Շ. Ա. Ա. Մ. ներկայացաւ կոլ նշանակելու սքանչելի առիթ մը, երբ ճոնի Քուրանի գրեթէ առանձին մնալով բերդապահին դիմաց չկրցաւ նշանակել:

Բաղդադում մը Ա. կիսախաղին, Բ. կիսախաղին Շ. Ա. Ա. Մ. կողմէ ստեղծուած առիթները աւելի շատ էին, որոնք սակայն կատարուեցան Ֆաթթալի կողմէ, որ դաշտին վրայ եղաւ Նրժմէի 11 մարզիկներէն գրեթէ միակ գոյութիւն ունեցողը: Մնացեալ մարզիկները, կամ սխալ փոխանցումներ կը կատարէին և կամ կը փորձէին ծանանակ վատնել:

Շ. Ա. Ա. Մ. կազմին վերադարձած էր բերդապահ Սաֆօ Էսքիճեան, որ շատ քիչ անգամ միայն փորձաքարի ենթարկուեցաւ: Շ. Ա. Ա. Մ. թէև կը բացակայէր յետապահ Սամուէլ Պօղոսեան, սակայն անոր խմբակիցները երբեք ալ չկազմուցին անոր բացակայութիւնը:

Երեկուան իր կատարած այս մրցումէն ետք, այժմ Շ. Ա. Ա. Մ. իր գլուխը բարձր բռնած, յառաջիկայ եղանակին պատրաստ է ճակատելու Ա. դասակարգի բոլոր խումբերուն դէմ, թէև խումբէն ներս հիմնական փոփոխութիւններ պէտք է տեղի ունենան ամբողջ ընթացքին:

Նրժմէի դէմ տեղի ունեցած երեկուան այս ճակատումին մրցումին տէրն ու տիրակալը ըլլալով, Շ. Ա. Ա. Մ. մարզիկներուն համար այսպիսով 2002-2003 եղանակին կ'աւարտի:

Ինչ կը վերաբերի Շ. Ա. Ա. Մ. համակիրներուն, անոնք անգամ մը եւս եկան լուշելու, որ 2003-2004 եղանակին, Նրժմէն ետք պիտի ըլլան երկրորդ մեծաթիւ համակիր ունեցող խումբը, ինչպէս անցեալին:

ՌԷՍԻՍՏԻՆՑ ԶԱՄԱԶԱՅՆ՝ ՌԱՌԻԸ «ԾԱԽԵԼ»ՈՒ ՄԱՆԶԵՍԹԸՐ ԵՈՒՆԱՅԹԸՏԻ

Ռէյալ Մատրիտի պատասխանատուները երեկ յայտնեցին, թէ համաձայն են յառաջապահ Ռաուլ Կոնչալէսը Մանչեսթեր Եունայթեդի «ծախել»ու, նկատի ունենալով, որ անգլիական կապուը հետաքրքրուած է Ռաուլով:

Սպանական ռատիոկայան մը յայտնեց, թէ այդ առնչութեամբ արդէն իսկ համաձայնութիւն մը գոյացած է երկու ակումբներուն միջեւ, սակայն Ռէյալ Մատրիտ հերքեց լուրը:

Մանչեսթեր իր կազմին կը փորձէր միացնել նաեւ Փարիզ ՍԷՆ ԺԵՐՄԵՆԻ պրագիցի յառաջապահ Ռոնալտոնի: Այս ուղղութեամբ կ'աշխատի Ռէյալ Մատրիտի պրագիցի մարզիկ Ռոնալտոն, որ կը փորձէ համոզել ակումբին նախագահ Ֆլորենթինօ Փերեսը, որ խումբին միացնէ Ռոնալտին, թէև Փերես կ'ըսէ, թէ յառաջիկայ եղանակին համար պէտք չունի Ռոնալտինի:

Ըստ այդ ռատիոկայանին, Ռէյալի նախկին մարզիչ Վիլենթէ Տել Պոսքէ և նախկին խմբակու Ֆեռնանտո Հիերօ, շատ հաւանաբար միանան Բ. դասակարգ փոխադրուած մատրիտեան կազմերէն՝ Ռայօ Վալեքանոյի:

Մանչեսթեր Եունայթեդ այժմ լուրջ աշխատանքի լծուած է իր կազմին միացնելու համար Փարմայի ճափոնցի միջնապահ Հիտեթոշի Նաքաբան, կը յայտնէ Թոքսիոյ մէջ իրապարակուող օրաթերթ մը:

26 տարեկան Նաքաբայով հետաքրքրուած են նաեւ Չելսի և Ա. Սէ. Միլան, մինչ Մարսել Նաքաբայով հետաքրքրուած էր անցեալ շաբաթ:

Առաջին անգամ ըլլալով 1998ին Քալչիոյ մրցումներուն իր մասնակցութիւնը բերած Նաքաբա, նախապէս մաս կապուած է նաեւ Ա. Էս. Ռոնայի և Փերուճիաի:

Ըստ ոչ պաշտօնական աղբիւրներու Փարմա Նաքաբայի համար պատրաստ է ընդունելու 15 միլիոն եւրոյի առաջարկուելէ գումար մը, նկատի ունենալով, որ անոր կապերը այդքան ալ լաւ չեն ակումբին մարզիչ Չեպարէ Փրանտելիի:

Ըստ ոչ պաշտօնական աղբիւրներու Փարմա Նաքաբայի համար պատրաստ է ընդունելու 15 միլիոն եւրոյի առաջարկուելէ գումար մը, նկատի ունենալով, որ անոր կապերը այդքան ալ լաւ չեն ակումբին մարզիչ Չեպարէ Փրանտելիի:

Ըստ ոչ պաշտօնական աղբիւրներու Փարմա Նաքաբայի համար պատրաստ է ընդունելու 15 միլիոն եւրոյի առաջարկուելէ գումար մը, նկատի ունենալով, որ անոր կապերը այդքան ալ լաւ չեն ակումբին մարզիչ Չեպարէ Փրանտելիի:

Ըստ ոչ պաշտօնական աղբիւրներու Փարմա Նաքաբայի համար պատրաստ է ընդունելու 15 միլիոն եւրոյի առաջարկուելէ գումար մը, նկատի ունենալով, որ անոր կապերը այդքան ալ լաւ չեն ակումբին մարզիչ Չեպարէ Փրանտելիի:



Ռաուլ



Չելսո

հետ, որովհետեւ անցեալ եղանակին ան տարբեր դիրքի վրայ դաշտ կը ներկայացնէր Նաքաբան:

Ռաուլով և Նաքաբայով չբաւարարուելով Մանչեսթեր Եունայթեդ շատ մօտէն հետաքրքրուած է նաեւ Արսենալի ֆրանսացի խմբակու Փարիք Վիլլիալով, որուն համար կ'առաջարկէ 36 միլիոն ամերիկեան տոլարի գումար մը:


Արսենալի փոխ նախագահ Տէյվիտ Տէն «Պի. Պի. Սի.» ռատիոկայանին հետ իր ունեցած հարցազրոյցին ընթացքին ըսաւ, որ ինչ գումար ալ, որ առաջարկէ Ֆերլարը, 27 տարեկան Վիլլիալ «ծախել» չէ:

Վիլլիալ, որուն պայմանագրութեան աւարտին մնացած է մէկ տարի, որ անոր կապերը այդքան ալ լաւ չեն ակումբին մարզիչ Չեպարէ Փրանտելիի:

ՌԻՍՊՈՒԼՏԵՐԻ ԹԵՆԻՍԻ ՄՐՑԱՇԱՐՔ

- ՍԱՐԳՍԵԱՆ ԵՒ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ԱՆՑԱՆ Գ. ՀԱՆԳՐՈՒԱՆ - ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ԴՈՒՐՍ ՄՆԱՑ

Ռիմպուլտընի կրան շլէմի թենիսի մրցաշարքին Բ. հանգրուանին երեկուան մրցումներուն, Հայաստանէն՝ Սարգիս Սարգսեան և արժանաբանաբար Պաիթ Նալպախան և տեւ ան (դասուած՝ 6րդ), ապահովեցին Գ. հանգրուանի իրենց արձանագրած յաղթանակները:



Սարգսեան

Սարգսեան տիրապետելէ ետք իր մրցակիցին՝ 26րդ դասուած ամերիկացի ձեյմս Պլէյթի վրայ, տարաւ վերջնական յաղթանակը, ստանց առիթ տալու իր մրցակիցին որ նոյնիսկ սէթ մը չահի: Մրցումը վերջ գտաւ՝ 6 - 2, 7 - 6 և 6 - 2 արդիւնքով: Գ. հանգրուանին Սարգսեան պիտի ճակատի 3րդ դասուած սպանացի Խոնան Քարլոս Ֆերեռոյի դէմ, որ վերջերս շահեցաւ Ռոյան Կարոսի կրան շլէմի թենիսի մրցաշարքը: Ֆերեռօ, որ 6 - 7, 6 - 3 և 6 - 3 արդիւնքով կը յառաջանար ֆրանսացի իր մրցակիցին՝ Նիքոլա Էսքիտի վրայ, սակայն այս վերջինը չկրցաւ մրցումը շարունակել վիշտով ըլլալով:

Պրագիցի Անտրէ Սա, որ Նալպախանի մրցակիցն էր 6 - 2, 7 - 5 և 6 - 2 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք անկէ, դուրս մնաց մրցաշարքէն: Գ. հանգրուանին Նալպախանի մրցակիցը պիտի ըլլայ Քարոլ Քուլեթա (Սլովաքիա), որ 6 - 3, 7 - 5 և 6 - 2 արդիւնքով պարտութեան մատնեց Թալա Սուլուրին (Ճափոն):

Չուիցերիահայ Մարի - Գայեանէ Միքայելեան չկրցաւ մրցաշարքը շարունակել, երբ Բ. հանգրուանին իր կատարած մրցումին 6 - 2 և 6 - 1 արդիւնքով պարտութիւն մը կրեց 8րդ դասուած ամերիկացի ձեյմս Քարիստիանի:

Ստորեւ՝ Բ. հանգրուանին երեկուան կարենաբազոյն մրցումներուն արդիւնքները.

● ՏՂԱԲ Թիմ Հենման (10րդ դասուած, Բրիտանիա) - Միքայել Լուրա (Ֆրանսա) 6 - 4, 6 - 4 և 6 - 3

Եունէս Ալանուի (27րդ, Մարոք) - Նիքոլա Մասի (Չիլի) 7 - 6, 3 - 6, 7 - 6 և 6 - 4

Անտրէ Ալասի (2րդ, Մ. Ն.) - Լարս Պուրկպիլըր (Գերմանիա) 6 - 3, 7 - 6 և 6 - 3

Մարք Ֆիլիպուսի (Աւստրալիա) - Սիբիլ Սուլիէ (Ֆրանսա) 6 - 3, 6 - 2 և 7 - 6

● ԱՂԻՎԵՐ Մարի Փիլո (Ֆրանսա) - Էլենի Տանիլու (14րդ Յունաստան) 6 - 4 և 6 - 1

Ճապիկ Հենի - Հարտէն (3րդ, Պելճիքա) - Ֆլաւիա Փանեթթա (Իտալիա) 7 - 6 և 6 - 1

Քուլչիո Մարթինէ (18րդ, Սպանիա) - Պարպարա Շիթ (Աւստրիա) 6 - 2 և 6 - 4

Անաբարիա Միքիլի (10րդ, Ռուսիա) - Լինա Քրասնորուցքայա (Ռուսիա) 6 - 1 և 6 - 4

● ԱՂԻՎԵՐ Թիմ Հենման (10րդ դասուած, Բրիտանիա) - Միքայել Լուրա (Ֆրանսա) 6 - 4, 6 - 4 և 6 - 3

Եունէս Ալանուի (27րդ, Մարոք) - Նիքոլա Մասի (Չիլի) 7 - 6, 3 - 6, 7 - 6 և 6 - 4

Անտրէ Ալասի (2րդ, Մ. Ն.) - Լարս Պուրկպիլըր (Գերմանիա) 6 - 3, 7 - 6 և 6 - 3

Մարք Ֆիլիպուսի (Աւստրալիա) - Սիբիլ Սուլիէ (Ֆրանսա) 6 - 3, 6 - 2 և 7 - 6

● ԱՂԻՎԵՐ Մարի Փիլո (Ֆրանսա) - Էլենի Տանիլու (14րդ Յունաստան) 6 - 4 և 6 - 1

Ճապիկ Հենի - Հարտէն (3րդ, Պելճիքա) - Ֆլաւիա Փանեթթա (Իտալիա) 7 - 6 և 6 - 1

Քուլչիո Մարթինէ (18րդ, Սպանիա) - Պարպարա Շիթ (Աւստրիա) 6 - 2 և 6 - 4

Անաբարիա Միքիլի (10րդ, Ռուսիա) - Լինա Քրասնորուցքայա (Ռուսիա) 6 - 1 և 6 - 4

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱԴԹԱՆՔ

Ս. ՅԱԿՈՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷԶ

Յառաջիկայ Կիրակի, 29 Յունիս 2003ին, Էշրեֆիի Ս. Յակոբ Եկեղեցոյ մէջ տեղի պիտի ունենայ հանդիսատար Ս. Պատարագ և Եայրապետական Մաղթանք

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԵՆՏՐԱՓՈՒ ԸԱՅՐԱՊԵՏ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ընտրութեան եւ օժան 8րդ տարեդարձին առիթով: Արարողութեան պիտի նախագահէ եւ քարոզէ թեմի Բարեջան Առաջնորդ՝

ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ

ԻՐԱԲԻ ՍԱՀՄԱՆԻՆ ԿՐԱՅ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄԸ ՄԻՋԱԴԵՊԻՆ ԳԾՈՎ

ՍՈՒՐԻԱ ՏԱԿԱԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ԿԸ ՍՊԱՍԵ ՌԻԱԾԻՆԿԹԵՆԷՆ

ԳԱՄՄԱԿՈՍ, 26 (ԱՅՓ).- Սուրիոյ արտաքին գործոց նախարարութիւնը Մ. Նահանգներէն տակաւին բացատրութիւն կը սպասէ՝ Իրաքի հետ սահմանին վրայ ամերիկեան մասնաշառուկ ուժերուն կողմէ յարձակումի մը ընթացքին սահմանապահ 5 Կինոտրնէրու ձեռքարկութեան 5 օր ետք:

ՍԱՆԱ լրատու գործակալութիւնը Չորեքշաբթի գիշեր հաղորդած է, թէ նախարարութիւնը պատասխան չէ տուցած Մ. Նահանգներու դեսպան Թիոտոր Քաթոլի ներկայացուած պաշտօնական բողոքին, որ փոխանցուած է յարձակումին օրն իսկ (Յունիս 19ին):

Նախարարութիւնը նաեւ պահանջած է վիրաւոր Կինոտրնէրուն վերադարձը՝ վանոնք Սուրիոյ մէջ դարմանելու համար, «որպէսզի կանխարգիլուի որեւէ թիրախացումը, որ կրնայ յանգիլ մագլցումի մը, կոր որեւէ կողմ չի փափաքիր», ըստ ՍԱՆԱի հաղորդագրութեան:

Մ. Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնրլոյ Ռամսֆելտը երեքշաբթի օր խոստովանած է, թէ Մ. Նահանգներ տակաւին իրենց մօտ կը պահեն սուրիացի Կինոտրնէրը:

Ան ըսած է, թէ անոնք արգելափակուած չեն, այլ՝ բժշկական դարմանումի կ'ենթարկուին, թէ-եւ այլ պաշտօնատարներու համաձայն, հինգ Կինոտրնէրէն երեքը միայն վիրաւոր են:

Առաւօտեան ժամերէն առաջ տեղի ունեցած գործողութեան մանրամասնութիւնները ցարդ անյստակ կը մնան: Ռամսֆելտը խոստովանած է միայն, թէ հետապնդուող իրաքցի ռեւէ պաշտօնատար չէ գտնուած:

Ան պաշտպանած է գաղտնի սպասարկութիւնները, որոնք փոխանցած են տեղեկութիւններ, որոնց հիմամբ տեղի ունեցած է յարձակումը՝ Իրաքէն դուրս եկած «կասկածելի կարաւանի մը վրայ», պնդելով, որ Ուաշինկթըն Գամասկոսի հետ կապի մէջ է այդ դէպքին գծով: Ամերիկեան պաշտպանութեան մարտի այլ պաշտօնատարներ ըսած են, որ թերեւս գործողութեան մէկ մասը սուրիական հողամասերու վրայ տեղի ունեցած է:

ՍԱՆԱ հաղորդած է միայն, որ սուրիական «Կինոտրական միաւոր մը Ապու Քամալի հարաւը միջադէպ մը դիմագրւած է»:

Սուրիոյ մէջ արեւմուտքի դիւանագէտ մը յայտնած է, թէ Գամասկոսի երկար լռութիւնը «պարմանալի» կը գտնէ:

ՍԷՌԻՏԱԿԱՆ ԱՐԱԲԻՈՅ ՄԷՋ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ

ՌԻՍ, 26 (ԱՅՓ).- Սերիտական Արաբիոյ մէջ ապահովութեան ուժերը ձեռքարկած են յաւելեալ վեց կասկածելիներ, որոնց երեքը «կառավարական կենսական կեդրոններու» քարտէսներ կը կրէին, հաղորդած է «Օքսպ» թերթը՝ Հինգշաբթի օր, ապահովութեան աղբիւրներ մէջբերելով:

Կասկածելիներուն չորսը ձեռքարկուած է Մեքքէի մէջ, երկուքը՝ Եմէնի սահմանակից Ասիր նահանգի մայրաքաղաք Ապիսի մէջ:

Ապահովութեան ուժերը նաեւ նոր յարձակումներու ձեռնարկած են Մեքքէի մօտ քանի մը ապաստարաններու վրայ, որոնք կը գործածուէին վէճեր պահ դնելու համար:

Յունիս 14ին Մեքքէի մէջ ապահովութեան ուժերուն կողմէ կատարուած շարք մը գործողութիւններու ընթացքին 5 կասկածելիներ սպաննուած էին եւ 12 ուրիշներ ձեռքարկուած:

Բախումին նաեւ սպաննուած են ապահովութեան մարտի 2 անդամ, ինչպէս նաեւ 5 ուրիշներ եւ 4 քաղաքայիններ վիրաւորուած էին:

Ոստիկանութիւնը մեծ քանակութեամբ վէճեր գրաւած էր: Ներքին գործոց նախարար Նայեֆ Պըն Ապտէլ Ապի իշխանը Կիրակի օր յայտնած է, թէ Ռիատի մէջ Մայիս 12ին տեղի ունեցած անձնասպանական գործողութեանց կապակցութեամբ 44 հոգի ձեռքարկուած է:

ՊԱՂՏԱՏ ՉՈՐՐՈՐԴ ՕՐՆ ԸԼԼԱԼՈՎ ԶՐԿՈՒՄԸ ՄՆԱՅ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵՆԷ

Չորրորդ օրն ըլլալով Պաղտատի բնակիչները Կրկուս մնացին էլեկտրական հոսանքէն, որ ընդհատուած է խափանարարական արարքի մը պատճառով: Ամերիկեան ուժերը խափանարարական արարքներու պատասխանատուութիւնը կը դնեն Սատտամ Հիւսէյնի հաւատարիմ Կինեայներու վրայ: Պաղտատի բնակիչները, սակայն դժգոհ են եւ կը մեղադրեն ամերիկացիները, որոնք աւելի քան երկու ամիսէ ի վեր չեն յաջողած պաղտատցիներուն մատուցել անհրաժեշտ ու կենսական ծառայութիւնները: Ձերմաստիճանի բարձրացումը աւելի էս կը բարկացնէ բնակիչները, որոնք հոսանքի ընդհատումին պատճառով չեն կրնար գործածել զոլվացնող սարքերը:

Խափանարարական արարքները սկսած են սովորական երեւոյթներ դառնալ Իրաքի մէջ՝ ամէնէն աւելի թիրախ դարձնելով քարիւղատար խողովակները: Խողովակներէն մէկը ուժանիւթ կը հայթայթէր Պաղտատը էլեկտրականութեամբ մատակարարող գործարանի մը:

Միւս կողմէ, էլեկտրականութեան ընկերութեան մէկ գործաւորը սպաննուեցաւ Պաղտատի մէջ, երբ անոր ինքնաշարժին մօտ պայթեցաւ ական մը:

Բրիտանիոյ միջազգային բարգաւաճման նախարար Վալըրի Էյմըս ըսաւ, որ հարաւային Իրաքի մէջ բրիտանացի վեց Կինոտրնէրու սպանութիւնը կը հաստատէ, թէ խաղաղութիւնը տակաւին չէ հաստատուած երկիրին մէջ: Էյմըս շեշտեց, որ այնքան ատեն, որ ապահովական վիճակը հակակշիռի տակ չէ, դժուար պիտի ըլլայ վերակառուցման հարցերով զբաղիլ:

ՓԵՆՔՍԿՈՆ 48 միլիոն տոլարի պայմանագրութիւն մը ստորագրած է ամերիկեան ընկերութեան մը հետ, որուն պիտի վստահուի իրաքեան բանակի կազմութիւնն ու մարզումը:

(ԱՅՓ)

ՌՈՒՍԻԱՅԷՆ ԲՐԻՏԱՆԻԱ ԲՆԱԿԱՆ ԿԱԶԻ ՄՂՈՒՄ



Փութին եւ Պլէր

ԼՈՆՏՈՆ, 26 (ԱՅՓ).- Բրիտանիա եւ Ռուսիա Հինգշաբթի օր ստորագրեցին համաձայնագիր մը, ըստ որուն Պալեստինայի տակէն անցնող խողովակ մը պիտի կառուցուի՝ ռուսական կապ մղելու համար դէպի Բրիտանիա:

«Գործակցութեան համաձայնագիրը» կնքուած է Լոնտոնի մէջ նախագահ Վլատիմիր Փութինի Բրիտանիա այցելութեան երրորդ օրը: Փութին Լոնտոնի մէջ տեսակցութիւն մը ունեցաւ Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլէրի հետ: Փութին եւ Պլէր անկախ կապատարի հարցէն, արծարած են նաեւ միջազգային հրատապ խնդիրներ:

Կապատար խողովակը պիտի կառուցուի ռուսական «Կապիթոմ» ընկերութեան կողմէ:

Համաձայնագիրին կնքումէն քանի մը վայրկեան առաջ, բրիտանական «Պի. Փի.» եւ ռուսական «Թի. Էն. Քէյ» ընկերութիւնները յայտարարած են, թէ վերջնականացուած են այլ համաձայնութիւն մը՝ Ռուսիոյ մէջ 6,15 միլիար տոլար արժողութեամբ միացեալ գործառնութեան մը առնչութեամբ:

Պլէր շեշտը դրած է առաջարկուած խողովակին առեւտրական եւ խորհրդանշական կարեւորութեան վրայ:

Լոնտոնի մէջ տեղի ունեցած «ուժանիւթի վեհաժողով»ին, Պլէր յայտնած է, թէ խողովակին կառուցումէն ետք, անկախ իսկական իմաստով ոչ միայն Եւրոպան եւ Ռուսիան պիտի կապէ, այլ նաեւ Բրիտանիան եւ Ռուսիան:

«Ռուսական ուժանիւթի մարզին կարելիութիւնները հսկայական են, եւրոպայի հետ յարաբերութիւնները կենսական կարեւորութիւն պիտի ունենան», ըսած է ան:

Փութին նոյնպէս ողջունած է համաձայնագիրը, ըսելով, թէ անկախ եւրոպական ուժանիւթի մարզին օգտակար եւ մրցակցութիւն ենթադրող պարագաման համար «շահաբեր պայմաններ» պիտի ստեղծէ:

Բրիտանիոյ առեւտուրի նախարարութեան համաձայն, երկու կառավարութիւնները նաեւ որոշած են աւելի սերտօրէն գործակցիլ՝ ուժանիւթի հարցերու գծով, ներառեալ՝ ուժանիւթի մարզի ապահովութեան եւ կենսոլորտի կապուած հարցերու շուրջ:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՌՏՆԶՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ...

Շարունակուած Ա. Էջէն

սակցութեան մը աւարտին, ըսաւ, որ թէեւ տակաւին պաշտօնապէս որեւէ որոշում չէ տրուած, բայց եւս այս պարագային կարելի է Կինադուի յայտարարութիւն մը նախատեսել յառաջիկայ քանի մը ժամերուն:

Արմատական շարժումներու ղեկավարները սակայն նոյնքան յաւատեալ չեն: Ռանթիսի հաստատեց, որ տակաւին որոշում չէ տրուած: Ան նախատեսեց Կինադուի յայտարարութիւն մը թերեւս քանի մը օրէն, ոչ՝ ժամէն: Իսլամական Ժիհադի ղեկավար Հինտի եւս ըսաւ, որ Կինադուի յայտարարութիւնը քանի մը ժամէն չի կրնար իրականանալ:

Պաղտատիցի վարչապետ Մահմուտ Ապպաս մտահոգ է քարտէսին գործադրութիւնը ձգձգող Իսրայէլի կեցուածքով: Ապպաս ըսաւ, որ եթէ քարտէսը պիտի յաջողի, Իսրայէլ պետք է անմիջապէս վայն գործադրութեան դնէ՝ յարգելով իր յայտարարած յանձնառութիւնն ու խոստումները: Ապպաս շեշտեց, որ պաղեստինեան իշխանութիւնը իր բաժինը կը գործարդէ, կը պահանջուի, որ Իսրայէլ այլ նոյնը ընէ:

Ապպաս ցաւ յայտնեց, որ Իսրայէլ ջնջած է ապահովութեան հարցերու բանակցութիւններու նիստ մը պաղեստինցի պաշտօնատարներու հետ, որովհետեւ պաղեստինեան պատուիրակութիւնը շատ մը հարցումներու պատասխանը կը սպասէր այդ հանդիպումէն:

Միւս կողմէ, Իսրայէլեան բանակը Պէյթ Հանունի մէջ պուլտոպրններով քանդեց բնակարանի Իիսիսիսային կապայի ոստիկանապետին յայտնեցին պաղեստինեան աղբիւրներ:

(ԱՅՓ)

ԹՈՒՐԵՒԱ

ՔԻՒՐՏ ՆԱԽԿԻՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ԴԷՄ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ ՎՃԻՌ

ԱՆԳԱՐԱ, 26 (ԱՅՓ).- Թրքական ատեան մը Հինգշաբթի օր երկրին քրտական գլխաւոր կուսակցութեան նախկին չորս ղեկավարներու դէմ մատուորապէս 2 տարուան բանտարկութեան վճիռ արձակած է՝ պաշտօնական փաստաթուղթեր վեղծած ըլլալու յանցանքով:

Վճիռը կ'արձակուէր մինչ ՏԵՀԱՓ Կուսակցութեան գործունէութիւնը կրնայ արգիլուիլ սահմանադրական ատեանին կողմէ՝ պաշտօնական փաստաթուղթեր վեղծած ըլլալու եւ քիրտ ըմբոստներու հետ կապեր ունեցած ըլլալու յանցանքներով:

Փաստաթուղթերը կը վերաբերին կուսակցութեան ներկայացուցչութեան՝ անցեալ տարուան Նոյեմբեր 3ի երեսփոխանական ընտրութեանց կարենայ մասնակցելու համար:

22 այլ ամբաստանեալներ անպարտ արձակուած են:

Թրքական օրէնքի

համաձայն, քաղաքական կուսակցութիւն մը պետք է ընտրութիւններէն առնուապէս 6 ամիս առաջ Թուրքիոյ 81 նահանգներէն առնուապէս 41ին մէջ գրասենեակներ բացած ըլլայ, որպէսզի կարենայ թեկնածուներ ներկայացնել:

Դատախաչութեան համաձայն, ՏԵՀԱՓ ընտրական իշխանութիւններուն յայտնած է, թէ 63 նահանգներու մէջ գրասենեակներ ունի, մինչ իրականութեան մէջ անիկա միայն 6 գրասենեակներու մէջ լիովին կազմակերպուած եղած է:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԹՈՒՐԵՒԱ...

Շարունակուած Ա. Էջէն

Հակառակ սահմանի բացման մասին շրջան ընող հաղորդումներուն, Թուրքիոյ վարչապետ Ապտիլլա Կիլ 25 Յունիսին յայտարարեց, թէ այս հարցը օրակարգի վրայ չէ: «Անտոլու» լրատու գործակալութիւնը հաղորդեց, թէ

Կիլ, որ կ'ընդունէր Թուրքիոյ գիտութիւններու ազգային ակադեմիայի պատմութեան հիմնարկի ներկայացուցիչները, պատասխանելով այն հարցումին, թէ «Թուրքիա կը պատրաստուի՞ քանալ Հայաստանի հետ իր սահմանը», յայտնած է. «Այդպիսի կացութիւն մը քննութեան առարկայ չէ, սակայն Թուրքիա կողմնակից է իր աշխարհագրական շրջանին մէջ առկայ բոլոր հարցերու լուծման՝ երկխօսութեան միջոցով»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՒԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի փոխարարմիջոցներու եւ հաղորդակցութեան նախարար Անդրանիկ Մանուկեան անդրադառնալով Հայաստան - Թուրքիա սահմանի բացման, երկ կառավարած է, որ եթէ քաղաքական որոշում տրուի եւ բացուի Հայաստան - Թուրքիա սահմանը. «Հայաստան պատրաստ է նոյնիսկ յաջող օրը բեռներ տեղափոխել»: «Մենք տեղեկութիւններ ունինք, թէ թրքական կողմը կու պատրաստ է», նշած է Մանուկեան:

Advertisement for National air conditioning units. Includes the National logo, an image of an air conditioner, and Arabic text: 'طبيعي الأعلى لأنو الأنقى والأفضل'. Contact information: TTC@cyberia.net.lb, 04-712177, 04-712129/30.